դաստիարակության կենտրոնի տնօրեն Հայր Վարդանին ծրագիրը հաջողությամբ իրականացնելու համար՝ մաղթելով նույն եռանդով եւ նախանձախնդրությամբ շարունակել անսակարկ ծառայությունը Հայ Եկեղեցու անդաստանում: Նորին Սրբությունն ընդգծեց, որ ուրախալի եւ գովելի է տեսնել այս մանուկներին, որոնց շուրթերից աղոթք է հնչում, երբ մանկան շուրթերով կրկին փառաբանվում է մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, եւ նրա կենարար հարությունը:

Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց թեմական առաջնորդներին, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության աշխատակազմին, Կրթության ազգային ինստիտուտի աշխատակիցներին, տեղական ինքնակառավարման մարմիններին, բոլոր մանկապարտեզների տնօրեններին, դաստիարակներին եւ ծնողներին, որ ջանք չեն խնայում, որպեսզի մատաղ սերունդը կրթվի մնայուն եւ հավիտենական արժեքներով:

Վերջում Վեհափառ Հայրապետը նվերներ բաժանեց երեխաներին, որից հետո Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխատակիցները պատվոգրեր, վկայականներ եւ նվերներ հանձնեցին մասնակից մանկապարտեզներին եւ մրցույթի հաղթողներին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԻԿՆՈՋԸ

Մայիսի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության առաջին տիկին Սվետլանա Մեդվեդեւային՝ Հայաստանի Հանրապետության առաջին տիկին Ռիտա Սարգսյանի ուղեկցությամբ:

Ողջունելով տիկ. Մեդվեդեւայի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ՝ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների դարավոր եղբայրական կապերին եւ երկրների սերտ համագործակցությանը: Նորին Սրբությունը գնահատանքով փաստեց, որ երկու երկրների նախագահների տիկինները համատեղ կրթական ու մշակութային ծրագրերով կարեւոր նպաստ են բերում երկու ժողովուրդների ջերմ հարաբերությունների զարգացմանն ու առավել զորացմանը:

Հանդիպմանը նշվեց Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների եղբայրական կապերի եւ տարբեր ոլորտներում համագործակցության, երկու Հովվապետների ջերմ հարաբերությունների մասին:

Հանդիպման ավարտին հյուրերը Վեհարանի եւ Մայր Տաճարի թանգարանային սրահներում ծանոթացան Հայ Եկեղեցու գանձերին եւ սրբություններին:

Հայրապետական Տիկնոջ հետ Լեհաստանում